կիթ և ոչ 'ի դպրոց փոխարկեցաւ 'ի ձեռս Իսլամաց եւ այս էր մի միայն շնորհք աստուածային, որ հրաշիւք ցուցաւ ըստ աւանդութեան Հայոց։ Եւ յետ այնորիկ Հայք և կղերականք նոցին կալան դարձեալ զայն եկեղեցի և ոչ ոք յօտար ազգաց կամ 'ի միաբանութեանց կարող եղեւ հակառակիլ դարաւոր իրաւանց նոցին։

Ի դաւիթ եկեղեցւոյն են արդարեւ կրկին խորանք, յանուն Ս. Գէորգայ և Ս. Նիկողայոսի, յաջմէ և յահեկէ դրան։ Խորանն Ս. Նիկողայոսի արարեալ է յետոյ նոյն ինքն Հաննա վարդապետ, որպէս ցուցանէ յիշատակարանն յետուստ պատկերին։ Բայց վասն այսր դիպուածոյ չունիմք ինչ յիշատակութիւն, ոչ 'ի գիրս և ոչ յարձանս, և չէ յայտ թէ Հաննա վարդապետ ուստի առեալ գրէ զայս. կամ յԱրաբացւոց իբրեւ Երուսաղէմացի և տեղեակ լեզուի նոցին, և կամ 'ի Լատին միաբանաց. ընդ որս կենակցեր 'ի տաճարին Ս. Յարութեան։ Իսկ Սալահատտին թերեւս ոչ կամեցաւ յայնժամ բոլորովին զրկել զՀայս 'ի ժառանգութենէ իւրեանց, զոր օրինակ զրկեաց յեկեղեցւոյն Յովակիմայ և Աննայի, որ չունէր այնչափ թշնամութիւն ինչ ընդ նոսա, որպէս ընդ Լատինս, զի թէպէտ եւ յառաման քաղաքին չզերծաւ եկեղեցի ինչ, բաց 'ի տաճարէն Ս. Յարութեան սակայն 'ի թախանձելոյ միաբանացն Հայոց եւ միջնորդելոյ Գրիգորի Կաթուղիկոսին, և Աբրահամ Պատրիարգի քաղաքին, շնորհեաց զայն նոցա։

Անգիր աւանդութիւն է 'ի մէջ միաբանաց՝ թէ գմբէթ տաճարի Ս. Յակոբայ էր յառաջագոյն կարի բարձր, ընդ որ նախանձեալ Սալահատտինայ, կամ միոյ 'ի Սուլթանաց Եգիպտոսի, և թերեւս յաւուրս Նիմէտտինի և Սալէհ Էյուպի. յորում կոտորեցին զբնակիչս քաղաքին Երուսաղէմի, և աւարի առին (1242) կործանեալ իցեն զայն, որպէս յայտ առնէ արդի գիրք գմբէթին, որոյ ուղղահայեաց լուսամուտն ծածկեցաւ յետոյ։ Իսկ գիրն Արաբերէն որ 'ի վերայ դրան ոչ է 'ի Սալահատտինէ. այլ բաղում ժամանակաւ յետոյ 'ի Սուլթանացն Եգիպտոսի. զորմէ ունիմք գրել 'ի տեղւոջ իւրում։

Զդաշնագիրն Մէլիք Սալահատտինի տուեալ առ կրօնաւորս Հայոց Երուսաղէմի 'ի բարբառ Արաբացւոց, 'ի տի-